

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ
ՀԱՄԱՍ ՇԱՐԺՈՒՄԸ. ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄԱԲԱՂԱԲԱԿԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ**

**GEVORKYAN GOR
HAMAS: HISTORICAL-POLITICAL PRECONDITIONS OF CREATION,
GOALS AND STRUCTURE**

**ГЕВОРКЯН ГОР
ДВИЖЕНИЕ «ХАМАС» : ПОЛИТ.-ИСТОРИЧЕСКИЕ ПРИЧИНЫ
СОЗДАНИЯ, ЦЕЛИ И СТРУКТУРА.**

**091 103 000
e-mail: ggevorgian1976@rambler.ru**

**«ՀԱՄԱՍ» ՇԱՐԺՈՒՄԸ. ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄԱԸՍՂԱԸՍԿԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ**

XXդ. 70–80-ական թթ. արաբական աշխարհում ընթացող տարաբնույթ քաղաքական գործընթացները հաճախ պայմանավորված էին պաղեստինյան հարցի կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքների անարդյունավետությամբ, արաբ-իսրայելական հակամարտության, ինչպես նաև «սառը պատերազմի» առկայությամբ: Պաղեստինյան հարցի կարգավորման գործունը արաբական-ազգայնական և իսլամական բազմաթիվ կառույցների համար դարձել էր օրհասական նշանակության խնդիր: Ժամանակակից Պաղեստինում, ինչպես նաև միջարաբական հարաբերություններում կարևորագույն գործոն է Իսլամական դիմադրության «Համաս» շարժումը, որի ստեղծման գործում զգալի նշանակություն ունի «Մուսուլման-եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպության պաղեստինյան ենթակառույցը:

1977թ. օգոստոսի սկզբին Պաղեստինի Ղազալի գոտու իսրայելական վարչակազմին դիմում ներկայեցվեց Մուսուլմանական (Ալ-Մուջամմասա Ալ-Իսլամիյա) կազմակերպության (ասոցիացիայի) գրանցման մասին [1]: Ներկայացված դիմումը ամրագրում էր այդ կազմակերպության գործունեության նպատակները, որոնք հիմնականում հանգում էին կրթության բնագավառի բարեփոխումների, առողջապահության ոլորտի կատարելագործման և բնակչության կենսամակարդակի բարելավմանը, որը պետք է իրականացվեր իսլամական բարոյականության ոգու շրջանակներում [2]:

Տարբեր հանգամանքների բերումով Ղազալի գոտում գերիշխող դերակատարություն ունեին իսլամիստները, որոնց շարքում առանձնատուկ տեղ էր զբաղեցնում «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպությունը [3], ի տարբերություն Հորդանան գետի Արևմտյան ափի, որտեղ բնակչության մեծամասնությունը հարում էր ազգայնականներին [4]: Ժամանակի ընթացքում իսլամիստների և ազգայնականների միջև հակասությունները դարձան ավելի արմատական[5]:

Պաղեստինում իսլամական շարժման նոր վերելքը և իսլամիստների դիրքերի ամրապնդմանը նոր շրջանը սկսվում է XXդ. վերջին քառորդում, ինչը պայմանավորված էր եվրոպական տիպի արևմտամետ քաղաքական համակարգերի ստեղծման փորձերի ձախողմամբ. այդ «համակարգերը» չդարձան արաբական Արևելքի յուրահատուկ պայմաններին հարմար սոցիալ-քաղաքական զարգացման մոդել [6]:

Հենց այս տարիներին պաղեստինյան «Մուսուլման-եղբայրներ» շարքերում սկսեցին ընթանալ որակապես նոր գործընթացներ, որոնք պետք է ի վերջո հանգեցնեին իսլամիստական նոր կազմակերպության ստեղծմանը: Որոշ տվյալների համաձայն 1980-ականների սկզբին միայն Ղազալի հատվածում հաշվվում էին շուրջ 8 իսլամիստական խմբեր, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության հետ և աչքի էին ընկնում գրեթե նույն գաղափարախոսությամբ: Այս ժամանակաշրջանում սկսեց ամրապնդվել «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության ակտիվիստներից շեյխ Ահմադ Յասինի [7] հեղինակությունն ու ազդեցությունը, որն էլ 1977թ. ստեղծեց և անձամբ գլխավորեց «Իսլամական միություն» (Ալ-Մուջամմասա Ալ-Իսլամիյա) խմբավորումը: Իսլամական խմբավորումները լուրջ ազդեցություն ունեին Նաբլուսի, Հեբրոնի, ինչպես նաև Ղազալի իսլամական համալսարանի ուսանողների շրջանում [8]:

Ուսումնասիրվող խնդրի շրջանակներում ուշագրավ է Իսրայելի դիրքորոշումն իսլամիստական խմբավորումների գործունեության նկատմամբ: 1970–80-ականների

ընթացքում, ընդհուպ մինչև առաջին «ինթիֆադայի» սկիզբը, իսրայելական իշխանությունները ոչ միայն չէին խոչընդոտում նրանց գործունեությունը, այլև աջակցում էին նրանց: Բավական է նշել 70-ականներին իսլամական համալսարանների հիմնադրման, Ղազալում և Արևմտյան ափին մզկիթների շինարարության, իլամական դպրոցների, ակումբների, կենտրոնների բացման մասին [9]: 1967–1986թթ. ընթացքում մզկիթների թիվը Ղազալում գրեթե կրկնապատկվեց՝ 77-ից հասնելով 150-ի [10]:

Իսրայելական իշխանությունները չէին թաքցնում իրենց մտադրությունը՝ «իսլամական արգելապատնեշը» հակադրելու գրավյալ տարածքներում գործող ՊԱԿ-ի աշխարհիկ ազգայնական կառույցների գործունեությանը (ամենից առաջ Ֆաթհի): Պաղեստինի իսլամական կազմակերպությունների և ՊԱԿ-ի միջև փոխհարաբերություններն ընդհանրապես բարդ բնույթ էին կրում: Այդ կազմակերպությունների մեծամասնությունը համարում էր, որ ՊԱԿ-ի գործողությունները պառակտում են իսլամական «ումման», քանի որ նրա ղեկավարությունը առաջնությունը տալիս է ազգային պայքարի խնդիրներին՝ ի վնաս համաիսլամական նպատակների [11]:

1987թ. Իսրայելի կողմից գրավյալ տարածքներում սկսեց ձևավորվել նոր քաղաքական իրադրություն, երբ իսրայելական զինվորական իշխանությունները արդեն ի վիճակի չէին իրենց վերահսկողության տակ պահել պաղեստինյան բնակչությանը Արևմտյան ափին և Ղազալի գոտում, իսկ պաղեստինցիներն այլևս չէին ցանկանում պահպանել մինչ այդ առկա իրադրությունը և պատրաստ էին ամենակտրուկ գործողությունների: Մյուս կողմից էլ տարբեր ծայրահեղական իսլամական խմբավորումների նկատմամբ սկսված ճնշումները եզակի հնարավորություն էին ստեղծում պաղեստինյան «Մուսուլման-եղբայրների» այն անդամների համար, որոնք իրենց ղեկավարության անգործության պայմաններում գիտակցում էին կազմակերպությունում արմատական փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը [12]:

1987թ. դեկտեմբերի 8-ին Ղազալում տեղակայված փախստականների Ջաբալիա ճամբարից ոչ հեռու իսրայելական բեռնատարի մարդատար մեքենայի հետ բախման արդյունքում զոհվեցին չորս պաղեստինցի [13]: Հաջորդ օրը սկսված բողոքի համընդհանուր ցույցը մի քանի օրվա ընթացքում ընդգրկեց ողջ Ղազան՝ տարածվելով նաև Արևմտյան ափի գյուղերում ու քաղաքներում [14]: Կատարվածը բողոքի սովորական ալիք չէր, այն ակնթափորեն տարածվեց համազգային ապստամբության, որն էլ հենց ցույցերի մասնակիցները անվանեցին «ինթիֆադա» [15]:

«Ինթիֆադայի» զանգվածայնությունն ու տևականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց իսլամական կազմակերպությունների գործունեության ակտիվացման համար [16]:

Ահա այսպիսի պայմաններում ստեղծվեց «Համաս» շարժումը՝ [17] վերածվելով «Մուսուլման-եղբայրների» կազմակերպության ռազմական թևի [18]: Արաբերենից թարգմանաբար «Համաս» նշանակում է «Իսլամական դիմադրության շարժում» (Հարաբաթ Ալ-Մուկավամա Ալ-Իսլամիյա): Ըստ որոշ աղբյուրների «Համաս» շարժման ստեղծման օրը համարվում է 1987թ. դեկտեմբերի 14-ը: Շարժման հոգևոր առաջնորդը դարձավ Պաղեստինում մեծ հեղինակություն վայելող շեյխ Ահմադ Յասինը, ով, ինչպես նշվել էր, դեռևս 1977թ. հիմնադրված «Իսլամական միություն» կազմակերպության հիմնադիրն ու ղեկավարն էր, ինչպես նաև Իսլամական կենտրոնի ղեկավարը Ղազալում:

Փաստորեն, «Իսլամական միությունն» էլ դարձավ նորաստեղծ «Համասի» կորիզը: Կարճ ժամանակ անց, «Մուսուլման-եղբայրների» միության ռազմական թևի շրջանակներից դուրս գալով, «Համասը» դարձավ ինքնուրույն կրոնա-քաղաքական կառույց, որը ոչ միայն

առաջատարներից էր պաղեստինյան իսլամական կազմակերպությունների շարքում, այլև հակադրվում էր ՊԱԿ-ին:

«Համասն» ունի չորս հիմնական բաժանմունք.

1. «Դ-աուա», որի հիմնական գործառույթն է ենթակառուցվածքի ընդլայնումը, քարոզչության միջոցով նոր անդամների հավաքագրումը, միջոցների ձեռքբերումն ու վերաբաշխումը:
2. Ենթակառուցվածք, որը զբաղվում է զանգվածային խաղաղ ելույթների կազմակերպմամբ և համակարգմամբ:
3. «Աման»՝ իսրայելական իշխանությունների հետ համագործակցության մեջ կասկածվող անձանց մասին տեղեկատվության հավաք և անվտանգության հետ կապված խնդիրների համակարգում:
4. «Ալամ»՝ թռուցիկների և այլ տպագիր միավորների տարածում շարժման գործունեության մասին տարբեր ՉԼՄ-ի միջոցով:

Այս բաժանմունքներից յուրաքանչյուրն ունի իր ենթաճյուղը: «Համասն» ունի նաև մի քանի ռազմականացված խմբեր: Դրանցից է «Ալ-մուջահիդուն ալ-ֆիլաստինիուն»-ը (Պաղեստինյան մուջահիդներ) խմբավորումը, որը գործողություններ է իրականացնում հիմնականում իսրայելցիների դեմ: Ռազմական ուղղվածություն ունի նաև «Ջիհազ ալ-ամն»-ը (Անվտանգության պահպանման կառույց): Այն իր կազմում ունի սրբազան պատերազմ վարող և քարոզչությամբ զբաղվող խումբ, որն անվտանգության բաժնի գործադիր մարմինն է և զբաղվում է իսրայելական իշխանությունների հետ համագործակցող անձանց չեզոքացմամբ:

«Համասի» ռազմական թևին են պատկանում «Ազ ադ-Դին ալ-Քասսամի» ջոկատները, որոնք կրում են XXդ. 30-ականներին հայտնի քաղաքական և կրոնական գործիչ Ազ ադ-Դին ալ-Քասսամի անունը [19]: Այս ջոկատները զբաղվում էին իսրայելացիների առևանգմամբ և սպանությամբ, ռազմական գործողությունների կազմակերպմամբ և այլն: «Համաս»-ի հիմնական խոշոր գործողությունները իրականացվել են հենց այս խմբավորման կողմից:

«Համասի» ղեկավարման հարցում սկզբունքային դեր ունի քաղբյուրոն: Այն մշակում է շարժման ընդհանուր ռազմավարությունը և սահմանում է ենթաճյուղերից յուրաքանչյուրի գործառույթներն ու գործունեության ոլորտը:

Շարժման հոգևորական գործիչները միավորված են «Ռ-աբիտաթ ուլամա ֆիլաստին» խմբի մեջ, որը զբաղվում է շարժման գործողությունների մեկնաբանմամբ իսլամի տեսանկյունից:

Շարժման ղեկավար օրգանը խորհրդակցական խորհուրդն է՝ «Մաջլիս աշ-շուրա», որի անդամներն են շարժման առաջատար գործիչները:

«Համասի» նորակոչիկները նախապատրաստվում են ռազմական ճամբարներում, որոնք տարբեր տվյալների համաձայն գտնվում են Սիրիայում և Լիբանանում: Շարժման անդամների կոնկրետ թիվը հայտնի չէ, բայց ըստ իսրայելական հատուկ ծառայությունների տվյալների այն հասնում է տասնյակ հազարների [20]:

«Համասն» ակնհայտորեն որոշակի հեռավորություն էր պահպանում «Մուսուլման-եղբայրներից», որոնք փաստորեն կորցրել էին ժողովրդի աջակցությունը Ղազալի գոտում և Արևմտյան ափում: Համասը պայքար սկսեց Պաղեստինի ժողովրդի օրինական ներկայացուցիչը համարվելու համար՝ վիճարկելով ՊԱԿ-ի՝ Պաղեստինի արաբների միակ օրինական ներկայացուցիչը լինելու իրավունքը: Պաշտպանելով իր իրավունքը այդ դերի համար՝ «Համասը» փաստարկում էր դա հետևյալ կարգախոսով, որը շատ տարածված էր «ինթիֆադայի» ժամանակ՝ «Դուրան՝ ահա պաղեստինյան ժողովրդի միակ օրինական

ներկայացուցիչը»: Անջատվելով «Մուսուլման-եղնայրներից»՝ «Համասի» առաջնորդները պիտի ձևակերպեին սեփական գաղափարական առաջնությունները:

Համաս շարժման տեսաբանները կտրականապես մերժում էին «Մուսուլման-եղնայրների» գաղափարախոսության գլխավոր սկզբունքը, որը պաղեստինյան հասարակության «վերախլամացումն» էր՝ որպես իսլամական պետության հենք: Ավելին, «Համասը» կենտրոնացրեց իր ուշադրությունը իսլամական պետության ստեղծմանը պատմական Պաղեստինի ողջ տարածքում [21] ներառյալ այն տարածքը, որը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1947թ. որոշմամբ հատկացվել էր Իսրայել պետության ստեղծման համար: Ընդ որում, «Համասի» գաղափարախոսների կարծիքով այս նոր պետական կազմավորումը պիտի դառնար առաջին փուլը պանիսլամական պետության ստեղծման ճանապարհին [22]:

«Համասի» առաջնորդների դիրքորոշումը կենտրոնացված է Իսրայելի գոյության իրավունքի ժխտման վրա, որը հիմնավորում են նրանով, որ Պաղեստինը սուրբ հող է, իսկ կրոնա-իրավական տեսանկյունից՝ վակֆ և այդ իսկ պատճառով ցանկացած տեսակի զիջումները Պաղեստինի տարածքի վերաբերյալ անթույլատրելի են և անօրինական:

Այս բոլոր դրույթները իրենց փաստացի արձանագրումը գտան «Համաս» շարժման կանոնադրությունում, որը հրապարակվեց 1988թ. օգոստոսին և կրում էր «Իսլամական խարտիա» անվանումը [23]: Կանոնադրությունը բաղկացած էր 36 հոդվածից: Այս ծրագրային փաստաթղթի բովանդակությունը ամփոփ կերպով ներկայացվում է «Համասի» կարգախոսում՝ «Ալլահը մեր նպատակն է, մարգարեն՝ օրինակը, Լուրանը՝ սահմանադրությունը, ջիհադը՝ ուղին, իսկ հանուն Ալլահի մահը՝ բարձրագույն ձգտում» [24]: Այս կարգախոսը նաև եզրփակված «Մուսուլման եղնայրների» միության կարգախոսն է: Նպատակների և խնդիրների նման ձևակերպումը բացառում է պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորումը, քանի որ դա հակասում է շարժման հիմնարար սկզբունքներից մեկին՝ ջիհադին:

Ուշագրավ է «Համաս»-ի վերաբերմունքը ազգայնականության նկատմամբ: «Համասի» առաջնորդները արաբական ազգայնականությունը, այդ թվում նաև պաղեստինյանը, համարում են իսլամական դավանաբանության մի մաս և դրանով էլ պայմանավորվում են նրա ոչ առաջատար (երկրորդային) բնույթը՝ իսլամական շաժման համեմատությամբ [25]:

Առաջին «ինթիֆադայի» ընթացքում «Համասի» և ՊԱԿ-ի մեջ շփումները իրականացվում էին Արաֆաթի անձնական ներկայացուցիչ և Ֆաթի ռազմական առաջնորդ Խալիլ ալ-Վազիրի (Աբու Ջիհադ) միջոցով: Սակայն 1988թ. ապրիլին, երբ իսրայելական հատուկ նշանակության ուժերը Թունիսում սպանեցին Աբու Ջիհադին, հարաբերությունները Համասի հետ գրեթե խզվեցին [26]:

«Համասի» կողմից «ինթիֆադայի» շրջանում տարածված քարոզչական նյութերում կոչ էր արվում պայքարումներ և բախումներ նախաձեռնել իսրայելական զինվորականների դեմ, հարձակումներ գործել Արևմտյան ափի և Ղազալի հրեական բնակավայրերի վրա: Քարոզվում էր խզել Իսրայելի հետ բոլոր տնտեսական կապերը, ստեղծել տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք կկարողանային փոխարինել իսրայելական իշխանությունների կողմից ստեղծած քաղաքական ինստիտուտները [27]:

1988թ. հունվարին ստեղծվեց «ինթիֆադայի» Միացյալ ազգային հրամանատարությունը (ՄԱՀ), որը միավորեց ՊԱԿ-ի կազմի մեջ մտնող տարբեր կազմակերպությունների ակտիվիստներին: ՄԱՀ-ի կողմից արված հայտարարարությունն «ինթիֆադայի» նպատակների մասին բաղկացած էր նախաբանից և 14 կետերից:

Հայտարարության մեջ հիմնականում արժաձվում էին հետևյալ սկզբունքները. ա) իսրայելական օկուպացիան չի կարող հավերժ լինել և իրական խաղաղությունը հնարավոր

է միայն այն դեպքում, եթե Իսրայելը ճանաչի պաղեստինցիների ազգային պահանջները, բ) հարկավոր է վերացնել գրավյալ տարածքներում տիրող ճգնաժամային իրադրությանը՝ ձերբակալվածներին ազատ արձակելու միջոցով, գ) Իսրայելին առաջարկվում էր սահմանափակել «հրահրող գործողությունները» հին քաղաքում [28] և պահպանել Երուսաղեմի մուսուլմանական և քրիստոնեական սրբավայրերի ստատուս քվոն, կոչ էր արվում վերջ տալ հրեական բնակավայրերի կառուցմանն և այլն [29]:

2006թ. Պաղեստինում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Համասը» օբյեկտիվորեն արժանանալով ընտրողների վստահությանը՝ կոալիցիոն իշխանություն կազմեց Ֆաթհ-ի հետ: Համասի հաղթանակը բազմաթիվ հակասությունների և դիմակայության առիթ դարձավ թե ներպաղեստինյան գործընթացներում, և թե Արևմուտքում, սակայն իսլամիստական այդ շարժման հաղթանակը վկայում էր նրա հեղինակության բարձրացման և Պաղեստինում ստեղծված որակական նոր իրադրության մասին, ինչպես նաև նոր էջ էր բացում իսրայելա-պաղեստինյան հարաբերություններում: Հարկ է նշել նաև, որ «Համասը» լրջագույն գործունը թե միջարաբական հարաբերություններում, և թե տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Литература

1. *Mishal S., Sela A.* Hamas: A Behavioral Profile, Tel-Aviv, 1997, p. 10–12.
2. *Поляков К., Хасянов А.* Деятельность исламских организаций после раздела Палестины и в начальный период интифады. С. Ближний Восток и современность. Выпуск 10. М.: ИИИиБВ, 2001. С. 256.
3. «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպությունը հիմնադրվել է 1928թ. Իսմաիլիայում (Եգիպտոս)՝ Հասան Ալ-Բաննայի նախաձեռնությամբ:
4. *Barr J.* Fundamentalism, L., 1991, p. 74.
5. Հարկ է նշել, որ վերոնշյալ հակասությունների կենտրոնական տեղերից մեկը զբաղեցնում էր պաղեստինյան հարցի կարգավորման վերաբերյալ նրանց դիրքորոշումը և պայքարի բնույթն ու ընթացքը:
6. *Barr J.* նշվ. աշխ. էջ 75:
7. Շեյխ Ահմադ Յասինը ծնվել է 1936թ. Ղազայում, նրա ընտանիքը առաջին արաբ-իսրայելական պատերազմի արդյունքում ապաստանել է Ղազայի փախստականների ճամբարում, որտեղ էլ անցել է Յասինի մանկությունը: Պատանեկության տարիներին սպորտային մարզումներից մեկի ժամանակ տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում գամվել է անդամալուծի սայլակին: Այս պատահարից հետո շեյխ Յասինն իր կյանքը նվիրել է իսլամի ուսումնասիրությանը և այդ նպատակով մեկնել է Կահիրե, որտեղ էլ կապեր հաստատելով «Մուսուլման եղբայրների» հետ և սովորելով Այն Շամսի համալսարանում, ստացել է շեյխի կոչում: Վերադառնալով Ղազա 1957–1964թթ. աշխատել է որպես անգլերենի ուսուցիչ: Նասերի վրա կատարված մահափորձից հետո Եգիպտոսում և Ղազայում «Մուսուլման եղբայրների» հանդեպ սկսված հետապնդումների արդյունքում Յասինը բանտարկվում է: Բանտում գտնվելու ժամանակ նա վարակվում է սուր վարակիչ հիվանդությամբ, որի հետևանքով գրեթե ամբողջապես կորցնում է տեսողությունը: 1967թ. Ղազայի հատվածի բռնազավթումից հետո բանտից ազատ է արձակվել: Յասինը համոզված էր, որ պաղեստինյան հասարակությունում գլուխ են բարձրացրել սոցիալ-բարոյական հարցեր և դրանց հաղթահարման համար անհրաժեշտ է վերադառնալ իսլամական ակունքներին: Ըստ նրա, հասարակության իսլամացումը նաև նախապայման կլինի ազատագրված Պաղեստինում իսլամական պետության ստեղծման համար: 1973թ. աշնանը իսրայելական ռազմական իշխանությունները թույլատրեցին Յասինին հիմնել «Իսլամական միությունը», որը պիտի զբաղվեր հասարակական, կրոնական և բարեգործական գործունեությամբ: Իսրայելական ռազմական իշխանությունները աջակցում էին «Իսլամական միությանը»՝ ֆինանսավորելով միության կողմից վերահսկվող մզկիթները: 1983թ. Իսրայելը սկսեց փոխել իր դիրքորոշումը մեծամասամբ այն

պատճառով, որ նորաստեղծ «Իսլամական ջիհադ» իսլամական կազմակերպությունը ռազմական գործողություններ էր ծավալել Իսրայելի դեմ: 1984թ. Յասինը ձերբակալվել է ապօրինի զենք պահելու համար և դատապարտվել է տասներեք տարվա ազատազրկության: Սակայն 1985թ. բանտարկյալների փոխանակության արդյունքում ազատ է արձակվել և վերսկսել է սոցիալական գործունեությունը: Ղազայում 1987թ. Յասինն ու իր համախոհները ներգրավվում են Իսրայելի դեմ քաղաքական պայքարում՝ ստեղծելով Համասի շարժումը: Այս մասին տես՝ *Hiro D. The Essential Middle East. A Comprehensive Guide. New York 2003. p. 576–577.* Շեյխ Ահմադ Յասինը սպանվեց 2004թ. մարտի 22-ին իսրայելական օդուժերի կողմից հասցված հարվածի արդյունքում:

8. Իսլամիստների համախոհները գերիշխում էին այս համալսարանների ուսանողական խորհուրդներում 80-ականներին: Այս բոլոր համալսարանները իրենց գործունեության մեջ առաջնորդվում էին իսլամական կրթական և դաստիարակչական մեթոդներով: Համալսարաններում գործում էին կրոնական գրականության և մահմեդական ումմայի հոգևոր առաջնորդների քարոզների տեսասկավառակների տարածման կենտրոններ: Այդ կենտրոններում մասնավորվում էին կրոնական բանավեճեր և տարվում էր իսլամական քարոզչություն: Այս մասին տես՝ *Поляков К., Хасянов А. Деятельность исламских организаций после раздела Палестины и в начальный период интифады, նշվ. աշխ. էջ 259:*

9. *Barr J. նշվ. աշխ., էջ 77:*

10. *Косач Г. Политический ислам в палестинском контексте: Движение Хамас. Исламизм и экстремизм на Ближнем Востоке, М.: ИИИ и БВ, 2001. С. 118.*

11. *Поляков К. Хасянов А. Деятельность исламских организаций после раздела Палестины и в начальный период интифады, նշվ. աշխ., էջ 260:*

12. Նույն տեղում, էջ 263:

13. *Клява А. Палестинское Национальное движение: От вооруженной борьбы к дипломатии с оружием в руках. С. 90 (1974–1991гг.) <http://www.iimes.ru>*

14. Ինքնիշխան առաջին օրերի իրադարձությունների արդյունքում արաբական ՉԼՄ-ներում շատ տարածված էր հետևյալ ձևակերպումը՝ «պաղեստինյան ժողովրդի թույլ ուժի դիմակայությունը իսրայելական կառավարության ուժի թուլությանը»: Խռովությունները իրականցվում էին գլխավորապես հետևյալ երեք մակարդակներով. 1) սովորական, ձեռքի տակ գտնվող միջոցներով (պարաստիկներ, այրվող խառնուրդներով, շշեր, քարեր և այլն), 2) լավ մարզեցված ակտիվիստներից բանակային գումարտակների ձևավորումը, 3) Իսրայելի դեմ պարտիզանական արշավների իրականացումը: ՉԼՄ-ներում կոչ էր արվում ցուցարարներին չօգտագործել հրազեն զենքեր, ինչ գործողությունների էլ դիմելու լինեն իսրայելական իշխանությունները: Այս մասին տես՝ *Клява А. նշվ. աշխ., էջ 91:*

15. «Ինքնիշխան» ապստամբություն, ընդվզում, բառացի՝ գլուխն ազատել, լուծը թոթափել:

16. *Андреев В. Основные этапы эволюции политического лидерства в палестинском национально-освободительном движении. Политическая элита Ближнего Востока. М.: ИИИ и БВ, 2000. С. 12.*

17. Համաս բառը արաբերենից թարգմանաբար նշանակում է «եռանդ, ջանք, խանդավառություն»:

18. *Поляков К., Хасянов А. Палестина: Перспективы независимости и проблема лидерства, Политическая элита Ближнего Востока. М.: ИИИиБВ, 2000. С. 155.*

19. Նա ծնվել է հյուսիսային Սիրիայում, կրոնական ընտանիքում: Կրթություն է ստացել Լաթաքիայում, իսկ հետո արդեն Ալ-Ազհար համալսարանում: Այստեղ նա դարձել է Մուհամմադ Աբդուլի գաղափարախոսության հետևորդը: Հետագայում, հաստատվելով Պաղեստինի Հայֆա քաղաքում, սկսել է քարոզել՝ ջիհադի կոչ անելով, «Ալլահի գիրքը մի ձեռքում, իսկ զենքը՝ մյուս» պայքարել Բրիտանական մանդատի և սիոնիստների դեմ: Նա զինված պայքարի կողմնակից առաջին գործիչներից էր: Քասսամը զբաղվում էր մասնաշրջաններին հուզող խնդիրներով և նրանց պաշտպանությամբ, որի շնորհիվ նա հեղինակություն ձեռք բերեց մասնաշրջան կրոնասեր մարդկանց շրջանում: 1935թ. Քասսամը շուրջ 800 կամավորներով արշավներ սկսեց կազմակերպել դեպի Հորդանան գետի Արևմտյան ափը: Ջենինի մոտ բրիտանական զորամիավորումների հարձակման արդյունքում Քասսամը սպանվում է: Սա առաջին զինված բախումն էր պաղեստինցիների և բրիտանացիների միջև: Այս մարտը ուղի հարթեց 1936թ. ապստամբության համար: Այս մասին տես՝ *Hiro D., նշվ. աշխ., էջ 424:*

20. *Капитонов К. А. Движение «Хамас» – ключевой игрок палестинской политики. С. 101,*

<http://www.iimes.ru>.

21. Ըստ «Համասի» կանոնադրության՝ պետությունը տարածվելու էր «գետից ծով», այսինքն Հորդանան գետից մինչև Միջերկրական ծով:
22. *Поляков К., Хасянов А.* Деятельность исламских организаций после раздела Палестины и в начальный период интифады. Նշվ. աշխ., էջ 265:
23. Նույն տեղում, էջ 266:
24. *Косач Г.*, նշվ. աշխ., էջ 119:
25. *Поляков К., Хасянов А.* Деятельность исламских организаций после раздела Палестины и в начальный период интифады, նշվ. աշխ., էջ 265:
26. *Ражбадинов М.* ХАМАС и палестинская национальная администрация в 90-х годах: конфликт или диалог. Ближний Восток и современность. Выпуск 21 М.: ИИИиБВ 2004. С. 114.
27. *Косач Г.* նշվ. աշխ., էջ 137:
28. Հին քաղաք ասելով նկատի է առնվում Արևելյան Երուսաղեմը՝ իր 4 թաղամասերով՝ քրիստոնեական, իսլամական, հրեական և հայկական:
29. *Пырлин Е.* 100 лет противоборства (1897–1997), Генезис, Эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы. М., 2001. С. 153–155.